ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 3 անդամներ:

Բացակա էին՝ Ալեքսեյ Ռուդոմյոտկինը, Միխաիլ Ռուդոմյոտկինը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ալեքսեյ Չիչյովը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արարատ Աբրահամյանը

Լսեցին
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023Թ-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ 09-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով Ֆիոլետովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Ֆիոլետովո համայնքի ավագանու 2023 թ.-ի նոյեմբերի 09-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆիոլետովո համայնքի 2023 թվականի նոյեմբերի 09-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Ֆիոլետովո համայնքի

կառուցապատման իրավունքով տրամադրելուն, մեկնարկային գները, աճուդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին:

4. Ֆիոլետովո համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

5. Ֆիոլետովո համայնքի անապահով բնակիչներին սոց.օգնություն տրամադրելու մասին:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25-Ա/

Լսեցին

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ, ԱՃՈՒՐԴԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՍԱՐԴԱՐՅԱՆ /

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Ֆիոլետովո համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Ֆիոլետովո համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելուն, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

2. Աճուրդ-վաճառքով օտարվում են հողատեսքեր 6 լոտով.

-Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0152-0068 ծածկագրով 0,088 հա գյուղարտադրական հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 420000 /չորս հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 2: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0152-0064 ծածկագրով 0,6374 հա գյուղատնտեսական արտադրական օբյեկտի հող: Մեկնարկային գինը

-Լոտ 3: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0152-0031 ծածկագրով 0,1803 հա գյուղատնտեսական արտադրական օբյեկտի հող: Մեկնարկային գինը սահմանել 860000 / ութ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 4: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0101-0106 ծածկագրով 0,098016 հա գյուղատնտեսական նշանակության խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 51000 / հիսունմեկհազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 5: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0015-0027 ծածկագրով 0,008878 հա գյուղատնտեսական արտադրական օբյեկտի հող: Մեկնարկային գինը սահմանել 43000 / քառասուներեք հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 6: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0007-0049 ծածկագրով 0,029798 հա բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 240000 / երկու հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ:

3.Վարձակալության իրավունքով, գյուղ. գործունեություն ծավալելու նպատակով, տրամադրվում է գյուղատնտեսական նշանակության հողամասեր՝ 2 լոտով

-Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0152-0067 ծածկագրով 0.048 հա գյուղատնտեսական նշանակության 2-րդ կարգի արոտավայր ՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով՝ 25 տարի ժամկետով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 1000 / հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 2: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0152-0062 ծածկագրով 0.50276 հա գյուղատնտեսական նշանակության 2-րդ կարգի արոտավայր ՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով՝ 25 տարի ժամկետով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 4000 / չորս հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով, համայնքի ավագանին որոշում է

Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքում 2024 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարատության նախարարություն՝ օրենքով սահմանված կարգով հրապարակելու համար:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդ օրը.

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27-Ն/

Լսեցին
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱԼԵՆՏԻՆԱ ՆՈՎԻԿՈՎԱ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով՝ Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ֆիոլետովո համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28-Ա/

Լսեցին
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՍՈՑ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱԼԵՆՏԻՆԱ ՆՈՎԻԿՈՎԱ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 7-րդ կետով, Ֆիոլետովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի

. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից.
Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29-Ա/

Ավագանու անդամներ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԼՈԽԻՆՈՎ

ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ

ՄԻԽԱԻԼ ՉԻՉՅՈՎ

Համայնքի ղեկավար

ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ_____

Նիստն արձանագրեց՝ Արարատ Աբրահամյանը

_____